

ԿՐՕՆԱԿԱՆ

ՓՐԿԻՉԸ ԵՆ ՄԵՂԱՒՈՐՆԵՐԸ

(Քարոթեան սերմերից) .

Յովհաննէս Մկրտիչ մարդկանց հրաւիրում էր դէպի ապաշխարութիւն։ Նոյն հրաւերով է սկսում և Յիսուս Քրիստոսի քարոզը։ Մասթէոս աւետարանիչը խօսելով Յիսուսի փրկութեան գործը սկսելու մասին, Վայնմ հետէ սկսաւ քարոզել Յիսուս և տաւ. ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից։ Եթէ ոչ ապաշխարեցէք, առում է Յովհաննէս աւետարանի մէջ, ոչ կարէք մտանել յարքայութիւնն Աստուծոյ։ Մարդու բարի վերանորոգումը պէտք է սկսուի ապաշխարութիւնից, առանց նրան անկարելի է մեր կեանքի որ և է հոգեւոր բարեկրթութիւն։

Այն մարդիկը, որոնք ճշուած են անարգարութեան և անօրէնութեան լուծի ներքոյ, դարձաւ Յիսուս Քրիստոս աշխարհին, այն կեանքը, որը ստեղծել էք ձեզ համար, չի կարող ձեզ տալ հոգու ցանկալի անդորրութիւն։ չի բերել ձեզ այն բանականութիւնը, որով մարդ գոհ է լինում իրանից։ Ձեր մարդարէնները ուսուցանում էին, որ խորամանկութիւնը, բռնութիւնը, անառակութիւնը, ատելութիւնը և այլն չարիք են, իսկ չարիքը միշտ ծնում է չարիք։ սակայն բուն բաղդատրութիւնը, բարձրագոյն երջանկութիւնն է բարութիւն, որը և ծնում է բարութիւնից, բարի, մաքուր Աստուածային կեանքից։ Դուք տաղտկացած էք մեղքի ծանրութեան տակ, ձեզ ճշում է մարդկային անարգարութեան ծանրութիւնը, եկէք ինձ մօտ և սովորեցէք ինձանից։ Իմ խօսքեր բուժիչ սպեղանի կլինեն ձեր տանջուած, հիւանդօտ սրտերի համար։ Ես ցոյց կտամ

այն ճանապարհը, որը հանդիստ կրերէ ձեր հոգու համար։
 Խոնարհեցէք իմ վարդապետութեանը, եկէք այն շաւղով,
 որը հարթել եմ ձեր առաջ և դուք կտեսնէք, որ իմ լուծը
 քաղցր է և բեռը թեթեւ։ Երկար, խաւար, հեղձուցիչ
 գիշերից յետոյ՝ իմ աշխարհ գալովը կսկսուի խաղաղ,
 լուսաւոր օրուայ արշալոյսը։ Մարդիկ վաղուց սպասում
 էին փրկութեան օրին։ Այժմ լրացել է։ Մօտեցել է Աս-
 տուծոյ արքայութիւնը։ Նա մօտ է, նա այստեղ է՝ ձեր
 մօտ է, ձեր շուրջն է, բայց նա պէտք է լինի ձեր մէջ,
 որ թափանցէ և յափշտակէ ձեր սիրտը։ Ձեր սրտում տեղ
 պատրաստեցէք Աստուծոյ համար, ձեր կեանքում ասպա-
 րէզ տուէք արդարութեան և բարութեան, ազատուցէք
 ձեր վրայ կուտակուած մեղքից, ապաշխարեցէք։ Առանց
 ապաշխարութեան չի կարելի Աստուծոյ որդի, Քրիստոսի
 աշակերտ լինել։ Յիսուսի զրոյցը Նիկոդիմոսի հետ շատ
 գեղեցիկ պարզում է այդ։ Հրէից իշխաններից մէկը, Նի-
 կոդիմոս անունով մէկը, գիշերով եկաւ Յիսուսի մօտ և
 ասաց Նրան, «Ռաբբի, գիտեմք, եթէ յԱստուծոյ եկեալ ես
 վարդապետ, զի ոչ ոք կարէ զայդ նշանս առնել, զոր դուդ-
 առնես, եթէ ոչ Աստուած իցէ ընդ նմա. պատասխանի
 ետ Յիսուս և ասէ ցնա, ամէն, ամէն ասեմ քեզ, եթէ ոչ
 ոք ծնցի վերստին, ոչ կարէ տեսանել զարքայութիւն Աս-
 տուծոյ» Յով. գ. 1—3. Յիսուս այդ պատասխանով, կար-
 ծես, ուզում էր ասել «Սպասիր, Նիկոդիմոս, դու բեզ
 անուանում ես իմ աշակերտ.— ինչո՞ւ. դու տեսար իմ
 հրաշքները և չլացար, սակայն հասկացել ես արդեօք խօս-
 քերիս իմաստը. սրտի յուզմամբ լսել ես իմ հրաւերը դէ-
 պի Աստուծոյ արքայութիւնը. արձագանք գտել է արդեօք
 իմ խօսքը քո հոգու մէջ։ Քո անցեալ յանցաւոր կեանքը
 արդեօք զղուելի դարձել է քեզ համար, վճռել ես դէն
 ձգել քեզանից, ինչպէս ծանր բեռ, քո թուլութիւնները,
 պակասութիւնները, մոլորութիւնները, արտասուք թափել
 ես քո անօրէնութիւնների վրայ, լուացել ես նրանցով
 կեանքի մեղսալից մեղքը։ Ամեն մարդ, որ Տէր, Տէր է
 ասում ինձ, չի մտնիլ Աստուծոյ արքայութիւնը, այլ նա

միայն, ով կկատարէ իմ երկնաւոր Հօր կամքը: Այս բոլորը դու հասկացա՞ր արդեօք, ով ուզում է գալ յետեւից, նա պէտք է ազատուի իւր նախկին մօլի սովորութիւններէ, պէտք է դէն ձգէ մեղքը, ինչպէս կեղտոտ հանդերձ, պէտք է սոսկալով հրաժարուի իւր անցեալ վատ կեանքից և սկսէ ապրել բոլորովին նոր ի նորոյ՝ նոր ծնունդի պէս. ճշմարիտը ասում եմ քեզ, վերջացրեց Յիսուս իւր զրոյցը Նիկողիմոսի հետ, ով որ չզղջայ իւր սրտում, հոգւով չվերանորոգուի, հոգով չծնի ի վերուստ, չի կարող տեսնել Աստուծոյ արքայութիւնը:

Այդպէս մեր Տէր Յիսուս Քրիստոսը հրաւիրում էր դէպի նոր, երջանիկ և արդար կեանք: Եւ երբ Նրա խօսքը հասնում էր մէկի սրտին և հոգւոյ խորքից դուրս էր բերում զզջման հառաչա՞ք և բեկումած սրտի արտասուք աչքերի վրայ, այն ժամանակ որպիսի սրտաշարժ հոգատարութեամբ և քնքոյշ սիրով էր վերաբերում զզջացող մեղաւորին: Ինչպէս հովիւը ուսերի վրայ դրած խնամքով տանում է յետ մնացած, գտած ոչխարին, ինչպէս հայրը ուրախութեամբ դիմաւորում է անհետ որդուն, ինչպէս թուխսը սիրով ծածկում և տաքացնում է թւերի տակ թոյլ ձագուկներին, այնպէս էլ Քրիստոս Փրկիչը հայրաբար հրապուրում է իւր մօտ բոլոր՝ սրտով բեկեալներին, բոլոր՝ իրանց անօրէնութիւնների վրայ լաց եղողներին: Նրա սիրոյ և արդարութեան դատաստանի առաջ չկար չարագործութիւն, որը չը մաքրուէր զզջման արտասուքով և նա լայն բաց էր արել իւր սրտի դռները զզջացող պոռնիկների, մեղաւորների և մաքսաւորների առաջ, առատօրէն առաջարկում էր նրանց իւր անսահման սիրոյ հարստութիւնից: Մաքսաւոր Մատթէոսին իւր առաքեալ էր դարձնում, մաքսաւորների գլխաւորների՝ Չաբէոսի մօտ գնում է ընթերելու, ամբողջ ժամերով զրոյց է անում սամարացի կնոջ հետ, որը ամաչում էր նոյն իսկ երեխ մարդկանց մէջ, ամենքից արհամարհուած մեղաւոր կնոջից եւրախտագիտութեամբ օծում է ընդունում, խաչուած աւազակին տանում է իւր երկնային օթեանը: Աւետաւանը

այնպիսի գործով է պատմում այս անցքերը, որ պէտք է մի քիչ մանրամասնօրէն խօսել նրանց մասին:

Երիքովում մեծ շարժում էր: Յիսուս ժողովրդի խուռն բազմութեամբ շրջապատուած անցնում էր քաղաքի միջով: Դէպքից օգտուելով Չաքէոս անունով մէկը, մաքսաւորները գլխաւորը, հարուստ մարդ, ուղղում էր տեսնել Յիսուսին, բայց չգիտէր ինչպէս անէր: Մօտենալ չէր համարձակւում, որովհետեւ ինքն իրան անարժան էր համարում: Իւր անցեալը մտաբերելիս՝ ամօթի թանձր կարմրութիւն էր պատում նրա երեսին և սիրտը ցաւագին սեղմւում էր: Նա, որ կողոպտում է ժողովրդին, զրկում թոյլերին և անպաշտպաններին, կարող է տեղ ունենալ սիրոյ և արդարութեան Մեծ Ուսուցչի մօտ: Ո՛չ, Չաքէոսը աւելի շուտով կհամաձայնի գետին անցնել, քան կանգնել այդ աղքատ Սրբի մօտ և իւր վրայ զգալ նրա մաքուր աչքերի հայեացքը, որ ասում են, թափանցում է մարդու հոգու ներսը և կարգում է սրտի դադտնիքը: Սակայն ուղղում է անպատճառ տեսնել: Չաքէոսը այնքան էր լսել այժմ Երիքովի միջով անցնող Յիսուսի բարութեան և սրբութեան մասին, որ նրա սիրտը անդիմադրելի կերպով ձգտում էր պէպի նա: Չաքէոս թէ իւր և թէ ուրիշների կեանքի մէջ այնքան քիչ էր տեսել արդարութիւն, որ շատ բան կտար, միայն թէ մի անգամ նայէր նրա վրայ, որ ինքն էր ճշմարտութիւնը և կեանքը և ուրիշներին էլ նոյն ճշմարտութիւնն էր սօրվեցնում: Սակայն ցաւն այն էր, որ Չաքէոս կարճահասակ էր և չէր կարողանում ուրիշների յետևից տեսնել Յիսուսին: Այն ժամանակ նա տուաջ վաղեց, բարձրացաւ ճանապարհի մօտ դանուռով մի թղենու վրայ և սպասում էր Յիսուսի մօտենալուն: Չաքէոսը ի բան էր ցանկանում միայն տեսնել Յիսուսին: Եւ յանկարծ Յիսուս մօտենալով այն տեղին, նայեց, տեսաւ Չաքէոսին և ասաց նրան, «Չաքէ, փութն էջ այտի, զի այսօր ի տան բում արժան է ինձ ազանիլ»: Չաքէոսը գլուխը կորցրած, ցած իջաւ ծառից և ուրախութեամբ Յիսուսին ընդունեց իւր մօտ: Փրկչի կողմից բաւական էր

մի քանի խօսք, որ Զաքէոսի սիրտը մի ընդունման կերպարանափոխուէր, վերածնուէր։ Այն միտքը, որ Յիսուս՝ Ամենամեծ Սուրբը, չի դարձում իրանից, ստոր կաշառակերից, փայլակի նման լուսաւորեց նրա խաւար հոգին։ Զաքէոսի հոգին զարթեց։ Թող ուրիշները չաշուենակեն արհամարհել իրան, որպէս կողոպտիչի, կաշառակերի և փնտաակար մարդու, Զաքէոսի համար այժմ պարզ էր, որ Աստուծոյ առաջինքը դեռ ևս բոլորովին չի կորած, որ իւր մէջ պահպանուել է Աստուածային մի կայծ, որ թանգ էր Մեծ Հիւրի համար և որը այժմ կգառնայ իւր ապագայ կեանքի ամենաթանկագին սեպհականութիւնը։ Այն ամենը, որի սիրուն Զաքէոսը առաջ անամօթաբար ոտնակոխ էր անում բարութիւնը և արդարութիւնը, այժմ նրա աչքում կորցրեց իւր գինը։ Նրա համար ամենակարևորն էր պահպանել այն բարեհաճութիւնը, որով այնպէս անակնկալ կերպով դէպի նրան վերադարձեց Յիսուս։ Եւ Զաքէոսը, ինչպէս ասուած է Աւետարանում, վերկենալով ասաց Յիսուսին. «Տէր, զիչս ընչից իմաց տաց աղքատաց և եթէ զորք զրկեցի, հատուցից չորեքկին»։ Յիսուս ասաց նրան. «Այսօր եղև փրկութիւն տանս այսմիկ» (Լուկ. ԺԹ. 8—9)։ Մի տասը ընդհանուր, թղթնու վրայ բարձրանալիս, Զաքէոս մտածում էր արդեօք, որ իւր հետ այդ տեսակ փոփոխութիւն կկատարուի։ Այդպէս զօրեղ է Տէրը իւր խօսքովը փրկելու և ծանր մեղաւորին, եթէ միայն նա բոլորովին երես չդարձնէ Աստուծոյ արդարութիւնից, և, ինչպէս Զաքէոսը, ցանկութիւն ունենայ գոնէ հեռուից տեսնելու Յիսուսին։

Բ.

Յիսուս փարիսեցի Սիմօնի մօտ հացկերութի էր նրստած։ Տանտէրը տհաճութեամբ ընդունեց Մեծ—Հիւրին։ Ընդ առաջ դուրս դալիս չհամբուրեց նրա հետ, ներս մտնելիս ոտքերը չլուաց և խնջոյքից առաջ նրա գլուխը չոծեց, երբ բոլորը բազմեցան, Յիսուսին մօտեցաւ մի կին,

որ ձեռին ունէր թանկագին ամանով իւզ, վախվախելով ներս մտաւ նա, անհամարձակ մօտեցաւ Յիսուսի ոտներին, Մինչև այժմ ամօթալի կեանք էր վարում նա: Հէնց ինքը առանց ամօթ քաշելու չէր կարողանում խօսել և մտածել իւր մասին: Նա իւր կեանքը անց էր կացրել աղմկալի խնջոյքներում և խրախճանքներում, սակայն սիրտը միշտ թախծալից էր: Նրա թեթեւամիտ ջանքերով թեան ժամանակ ոչ ոք բարի խորհուրդ չէր տուել. ոչ ոք չէր զսպել նրան գայթակղութեան լայն ճանապարհի առաջ, իսկ այժմ բոլորը երես են դարձնում, մի կողմ քաշում, մատով ցոյց տալիս, անարգութեամբ արտասանում նոյն իսկ նրա անունը: Ոչ ոք չի խղճում, ոչ ոք չի նայում նրա հոգուն, ոչ ոք չգիտէ, թէ ինչպէս յաճախ աղմկալի խրախճանքներից յետոյ դառնապէս հեծկլտում էր մետաքսէ բազմոցի վրայ նստած, թէ որպիսի զգուանքով կտրատում ու պոկ տալիս անարգանաց գնով գնուած գնտերն ու մանեակները: Ո՛հ, գէթ կարեկցական մի խօսք ասէին նրան, մի բարի և հաճոյական հայեացք ձգէին վրան: Նա լսել էր, որ Մեծ Արդար Յիսուսը ոչ ոքի չի մերժում, որ նրան դիմում են շատերը իրանց դառնագին վշտով և նա սիրով մխիթարում, յուսադրում է նրանց: Նրա վրայ էր դնում նա իւր վերջին յոյսը և առնելով թանկագին իւզ, գնում է այն տունը, որտեղ Յիսուս բազմել էր հացկերութիւն: Ամօթը մի կողմից, երկիւղը միւս կողմից դանդաղեցնում են նրա քայլերը: Իսկ եթէ Սուրբը և Անարատը յետ քաշուի նրա արատաւոր անմաքրութիւնից, Շունչը բռնած, առանց մի խօսք արտասանելու, նա երկիւղով ընկաւ մաքսաւորների բարեկամի ոտքը և նա չմերժեց նրան: Այն ժամանակ նրա բոլոր վիշտը, կեանքի բոլոր դառնութիւնը դուրս թափուեց. — խեղճ մեղաւորը հեծկլտանքով փաթաթուեց Յիսուսի ոտներին և երախտագիտութեամբ համբուրեց նրանց: Արտասուքը հոսում էր վտակի նման և լուանում սուրբ ոտների դարչապարը: Նրա մազերը, որոնց այնպիսի վարպետութեամբ և գեղեցկութեամբ հիւսում էր, վայր էին թափուել և նրան-

ցով մաքրում էր արտասուքի հետքերը: Յետոյ նա բերած ամանը կոտրեց և իւղով օծեց Յիսուսի ոտքերը: Նրա հիւրասիրող փարիսեցին տեսնելով այդ՝ ինքն իրան ասաց, «Եթէ նա մարդարէ լինէր, այն ժամանակ կ'իմանար թէ ո՞վ և ինչպիսի կ'ին է մօտենում Իրան, որովհետեւ նա մեղաւոր կ'ին է»: Սիմօնը իմանալով այդ արտասուող կնոջ անցեալ կեանքը, այդպէս էր դատում, սակայն Յիսուս դատում էր այլ կերպ: Նա կարգում էր մարդկանց սիրտը և գիտէր, որ Իւր մօտ նստողը նախկին մեղաւոր կ'ինը չէր. նրա հոգու բոլոր կեղտը լուսացուած էր զղջման այրող արտասուքով: Այժմ՝ Նրա ոտներէ մօտ ընկած էր մի կին, որի վերածնուած հոգու գեղեցկութիւնը գերազանցում էր մարմնի գեղեցկութիւնից: Սրտագէտ Յիսուսը գիտէր, որ այժմ աւելի շուտով գետը իւր հոռանքը կ'սփռէ, քան այդ կինը կ'բառնայ իւր նախկին կեանքին: Ուստի և դառնալով նրան, ասաց, «Թողեալ լիցին քեզ մեղք քո, հաւատք քո կեցուցեն զքեզ, երթ ի խաղաղութիւն»: Եւ կինը ուրախուածեամբ գնաց իւր տունը: Նրա վերաբերմամբ կատարուեցաւ Վրիստոսի երանութիւնը, «Երանի՜ սգաւորաց, զի նոքա մխիթարեսցին»: Նա Յիսուսի ոտքը բերեց իւղ և արտասուք, իսկ այնտեղից տարաւ հոգու խաղաղութիւն և սրտի մխիթարութիւն:

Գ.

Երեսաղեմում տօն էր: Յիսուս նստել էր տաճարի սրահներից մէկում և սովորեցնում էր ժողովրդին: Ունկընդիրները մեծ բազմութեամբ շրջապատել էին Փրկչին և լռելեայն, խորին ուշադրութեամբ լսում էին Նրա ամեն մի խօսքը: Յանկարծ կատաղի գոռում — գոչումները խափանեցին ջերմեռանդ խաղաղութիւնը: Փարիսեցիների մի խումբ՝ ձեռքերը չարախնդութեամբ շարժելով, Յիսուսի մօտ էին բերում մի կիսամերկ, գղղղուած մազերով սարսափահար և ամօթահար եղած կին:

— Վարդապետ, կանչում էին նրանք, այս կինը բըռ-

նուած է պոռնկութեան մէջ. Մովսէս իւր օրէնքով հրամայ-
 րում է այդպիսիներին քարկոծել, դու ի՞նչ կասես սրա դէմ:
 Նրանք ճանաչում էին Յիսուսի անսովոր բարեսրտու-
 թիւնը, որ սիրում էր նրանց, որոնց ուրիշները ատում
 էին, դովում էր այն, ինչ որ ուրիշները պախաւակում
 էին: Նրանք գիտէին, որ մաքսաւորը Նրա ընտրեալ աշա-
 կերտների մէջն էր. մեղաւորները Նրա սեղանակից էին
 և պոռնիկները անարգել լուանում Նրա ոտքերը և
 լսում Նրա վարդապետութիւնը: Նրանք այդ բոլորը գի-
 տէին, ուստի և կարծում էին, որ իրանց հարցով Յիսու-
 սին անեղանելի դրութեան մէջ դրին. — կամ կներէ մե-
 ղաւորին և դրանով կըանդէ Մովսիսի օրէնքը, կամ
 կդատապարտէ սրան և դրանով յետ կմղէ իրանից ժո-
 դովդին, որը այնքան դնահատում է Նրա բարեսրտու-
 թիւնը դէպի բոլոր ճակատագրից հալածուածները: Բայց
 Յիսուս վարուեց այնպէս, ինչպէս չէին սպասում նրանք:
 Նա լաւ հասկանում էր նրանց չարասրտութիւնը, ապե-
 րախտութիւնը, հոգու կոպտութիւնը և որ նրանք Աստուծոյ
 արդարութեան դատաստանի առաջ աւելի յանցաւոր են,
 քան այդ պոռնիկը: Սրտի խորին վշտով լսեց նրանց դա-
 ժան հարցը, գլուխը կախ գցեց և լռութեամբ սկսեց
 մատով դժել գետնի վրայ: Նրանք չհասկացան Փրկչի
 վիշտը և կրկնեցին իրանց հարցը. «Ի՞նչ կասես մեզ»: Յի-
 սուս աչքերը բարձրացրեց նրանց վրայ: Ոչ ամօթի նշան
 էր երևում նրանց խարդախ հայեացքներում և ոչ գթա-
 սրբութեան հետք նրանց քարէ սրտերում: Եւ դրանք
 պէտք է դատեն այս կնոջը. դրանք պէտք է քարկոծեն
 ուրիշներին: Ո՞հ ի՞նչ երանի կլինէր, եթէ նրանք հասկա-
 նային իրանց խղճի վրայ կուտակուած մեղքի ծանրու-
 թիւնը:

Յիսուս մի բոպէական հայեացք ձգեց նրանց վրայ,
 բայց Նրա այդ հայեացքի մէջ նրանք պարզ կարդացին,
 որ Նրան յայտնի է իրանց սրտի գաղտնիքը, որ Նա գիտէ
 իրանց սեպհական հոգու գինը և երբ պատասխանեց թէ,
 «ով որ ձեզանից անմեղ է, նա թող առաջի քարը ձգէ»:

ոչ ոքի ձեռք չբարձրացաւ: Դատապարտողները չփոթուած սրտով, ամօթահար եղած լռութեամբ ջրուեցան: Մնաց Յիսուս մեղաւոր կնոջ հետ:

Մի եկեղեցական հեղինակի ասելով՝ այժմ տաճարում երկուսն էին—վիշաք և ողորմածութիւնը. կարող էր կինն էլ հեռանալ, նրան այլ ևս ոչ ոք չէր բռնում. բայց նա ինքը անշարժ էր մնացել. նրա ձեռներն ու ոտները ազատ էին, բայց սրտով արդէն կապած էր Յիսուսին: Նա միայն խղճաց իրան, որ Աստուծոյ առաջ պիղծ էր և մարդկանց առաջ խայտառակուած. նա միայն իրան զգալ տուեց, որ դեռ ևս անդառնալի կորած չէ ինքը և որ դեռ ևս կարող է յոյս ունենալ. նրա երկնային սիրոյն արժանանալու: Եւ նոր սէրը, ոչ մեղաւոր մարմնական սէրը, այլ մաքուր, հոգևոր, սուրբ սէրը յափշտակեց նրա հոգին: Դէպքը դարձաւ անմեղ, հայեացքը անարատ. այլ ևս պոռնիկը չկար, նա վերածնունել էր. նրա համար դարչելի էր թուում անցեալի յիշատակը:

Նայեց նրա վրայ Սրտագէտն Աստուած և ասաց. «Ինն դու, ռւր են քեզ մեղադրողները. ոչ ոք չդատապարտեց քեզ. — Ոչ ոք, Տէր. — Եւ ոչ ես եմ դատապարտում քեզ, գնահ և այլ ևս մի մեղանչիր»:

Դ.

Երկու հոգի տաճար մտան աղօթելու՝ մէկը փարիսեցի, միւսը մաքսաւոր: Փարիսեցին պատուաւոր, միշտ տաճար յաճախող մարդ էր. նրա համար այստեղ ամեն ինչ ծանօթ է և ամենքն էլ ճանաչում են նրան: Մեծապանծ քայլերով, գլուխը բարձր բռնած, նա հպարտութեամբ անցնում է ճանապարհ բաց անող աղօթողների միջով և կանգնում է ամենից առաջ բարձրութեան վրայ: Նրա առաքինի գործերը ամենքը տեսնում են այնպէս, ինչպէս այժմ իրան են տեսնում: Նա թէ տաճարում աղօթելիս, թէ պահք պահելիս, և թէ վերջապէս բարեգործութիւն անելիս միշտ և ամենուրեք առաջինն է:

Զգալով այդ՝ նա խորին ինքնաբաւականութեան զգացմունքով ասում է. Աստուած իմ, շնորհակալ եմ՝ Գեղանից, որ ես ուրիշների պէս չեմ, ինչպէս, օրինակ, այն մաքսաւորը, որ կանգնած է դրան մօտ: Փարիսեցին իրանից բաւական է: Դրսից, ըստ երևութին, նա կատարելապէս առաքինի մարդ է և նրան մնում է միայն դո՛ւռողութեամբ իր վրայ նայելով՝ հրճուել: Որ ճշմարիտ կեանքը ներքին, սրտի կեանքն է, որ Աստուծուն ամենից առաջ պէտք է ծառայել ոչ թէ արտաքին բարեպաշտութեամբ, այլ հոգւով և ճշմարտութեամբ— փարիսեցին այդ չէր հասկանում, նրա սիրտը խուլ էր դէպի ապաշխարութեան ձայնը: Նա, որ ասել էր իր մասին. «Ես եմ կեանքը», իւր կեանքը չէր կարող գտնել փարիսեցու մէջ. փարիսեցին Աստուծոյ արքայութեան համար չի ծնուած:

Ուրիշ էր մաքսաւորը: Նա անշուշտ արատաւոր փշացած մարդ էր. նրա ամբողջ կեանքը լի է ծանր յանցագործութիւններիով, նրան բոլորը արհամարհում են և ինքն էլ շատ թանգ չի գնահատում իրան: Ինչ որ պատահական դիպուածով նա այսօր ուրիշների հետ տաճար մտաւ: Նա վաղուց է չէր եղել Աստուծոյ տանը, նրա համար ամեն ինչ օտար է այստեղ, անծանօթ: Հայեացք ձգելով տաճարի կամարների և որմերի վրայ և չվճռելով առաջ գնալ, վախժրիւնով կանգ առաւ դրան մօտ: Այդ՝ վաղուց չտեսած սուրբ սերմերը նրա մէջ ծնեցրին անցեալի յիշատակներ: Նա յիշեց թէ ինչպէս ինքը փոքր հասակում գալիս էր այստեղ ծնողաց հետ ամեն տօնի. այստեղ մայրը առաջի անգամ սովորեցրեց նրան պարզել ձեռները աղօթելու. սիրում էր նա այն ժամանակ ձայնակցել հաղարաւոր ամբօխին Խորայէլի ողբը կամ Դաւթի սքանչելի սաղմոսները երգելիս: Ի՞նչպէս պարզ հնչում էր նրա մանկական ձայնը, որքան հոգեկան մաքրութիւն, զմայլելի սէր առ Աստուած զգացում էր նրա ամեն մի հնչիւնի մէջ: Սրտի ճրպիսի յուզմամբ լսում էր նա սուրբ Գրոց հին մարգարէների հրեղէն խօսքերը, ի՞նչպէս նրանց հետ միասին դժգոհում, զայրանում էր ամբա-

ընդունելի անօրէնութիւններ Վրայ, և Եղիայի, Եսայեայ, Երեմիայի հոգւով և զօրութեամբ մտորում էր ծառայել Եհովային, ինչ եղաւ այդ բոլորը Յիշողութեան մէջ կարգով անցնում են տարիները տարիների յետեից և որքան ժամանակը առաջ է գնում, այնքան մթնանում է նրա հոգին։ Մոռացուած են և մօր խօսքերը և տաճարը և աղօթքը, մոռացուած են խիղճը և մանկական ցնորքները։ Քամուց յափշտակուած տերեւների նման նրա յիշողութեան մէջ փայլում են տնցեալի պատկերները և իբրեւ ծոհոր քար ճնշում նրան, գլուխը խոնարհեցնում է կրճքին։ Շարժուեց քարայած սիրտը, յիշեց ամօթահարութեամբ ի կորուստ մատնուած ոյժերը, ափսոսաց անցած և դնացած պատանեկութիւնը, աչքերի վրայ երևացին ջերմ արտասուքներ և վտակի նման հոսելով՝ զովացրին մաքսաւորի թալկացած հոգին։ Հալեցաւ նրա մէջ չարութիւնն ու ատելութիւնը գէպի մարդիկ, հոգեւոր կեղտը լուացուեցաւ արտասուքով։ Մաքսաւորը տաճար եկաւ իբրեւ ծոհոր մեղաւոր և դուրս եկաւ իբրեւ Աստուծոյ արքայութեան որդի, «Ճշմարիտ եմ ասում ձեզ, սովորեցնում է Աւետարանը, եթէ չբառնաք և չզղջաք ինչպէս մաքսաւորը, չէք կարող մտնել երկնքի արքայութիւնը»։

Պետավից բարգմ. Գրիգոր Բեկյ. Նոր-Արեւեանց.

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Եւ թեմեր

Նորին Սրբութիւն Ազգիս ծերունազարդ Հայրապետը օրհնում և շնորհակալութիւն է յայտնում այն բոլոր անձանց և հիմնարկութիւններին, որոնք նոր տարուայ, Քրիստոսի ու ծննդեան և յայտնութեան և Նորին Սրբութեան անուանակոչութեան տօներին շտապել էին կատարել իրենց որդիական պարտքը հեռագրական բարեմաղթութիւններով կամ անձամբ՝ այս վշտի ծով ժամանակում։